

Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն

ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հերկայ ազգայնական խնդիրն որոշելու պահուն, գրեթէ ամէն ազգ կը ջանայ իր բնատուր և ցեղային սահմաններուն մէջ ամփոփուիլ՝ ջանալով ունենալ միանգամայն ծովերու վրայ գտնէ փոքր հողամաս մը: Դրով չըջապատուած երկրի մը վաճառականութիւնը և տնտեսական կենսութիւնը միշտ աւելի յաջող և ծաղկած չըջան միտենցած են քան չորս կողմէն ցամաքով չըջապատուած երկրի մը վիճակը: Ասկէ մղուած՝ մեր Ազգ. Պատուիրակութիւնն ամենայն հետապնդում կը գործադրէ, կարենալ ներփակելու համար Անկախ Հայաստանի սահմաններուն մէջ՝ բացի Կիլիկիայէն (որ մեր երկրին տնտեսական կենսութիւնն էն մեն ազգակը պիտի ըլլայ), նաև Տրապիզոնի կարևորագոյն նաւահանգիստը: Այս յօդուածին թարգմանութեան նպատակն է՝ ցոյց տալ թէ ինչ եղած է Տրապիզոնի կարևորութիւնը առևտրական տեսակէտով Միջին դարուն մէջ, և հետևաբար թէ ինչպէս պէտք է որ անայն կերպով ջանանք ձեռք ձգել զայն, եթէ կ'ուզենք մեր ապագայ վաճառականութեան նըպատել:

Ինչ բանի մէջ կը կայանայ Տրապիզոնի այդ մեն կարևորութիւնը... Ըստ ինքեան Տրապիզոն՝ իբրև նաւահանգիստ՝ ընտիր կերպով շինուած չէ. նաւերը չեն կրնար քարափին մօտենալ՝ երբ ջուրը ինչ ինչ շրջաններու մէջ ցած է. ասիկա առաջին անտեղութիւնը: Զետոյ՝ պատասպարուած չըլլալով մասնաւոր թումբերով՝ բոլորովին նշաւակ է հիւսիսային բուն քամիներուն, ուսկից մեն անպահովութիւնն նստերուն...

Բայց իր գնահատանքի միակ պատճառը և արժանիքը կախում ունին իր դիրքէն. այսինքն թէ Պարսկաստանի հետ եղած վաճառականութեան գրեթէ ամենահամաձայն ձևերէն է, մաս-

նաւորապէս Եւրոպայի արևելակողմէան երկիրներուն համար... Դեռ աւելի կարևորութիւն ստացաւ Տրապիզոն, երբ 1883էն վերջ՝ ռուս կառավարութիւնը արգելք դրաւ այն բոլոր եւրոպական վաճառքներուն որ կ'ովակասէն անց նեւով՝ կ'երթային ի Պարսկաստան. հետևաբար միակ ճամբան անկէ վերջ եղաւ Տրապիզոն - կարին - Դամպրէժ գիծը, ուսկից առաւ այդ մեն կարևորութիւնը:

Արքան աւելի շահեկան և արդիւնաբեր պիտի ըլլայ, երբ անկախ Հայաստանը Միացեալ Նաւահանգաց հօքը օգնութեամբ կարենայ քիչ մը աւելի բարւոյն նաւահանգիստը և պահպանել զայն հովիտուն դէմ, և երբ միացնէ զայն չոգեկառքով ներքին Հայաստանի հետ, դէպի ծով առաջնորդելու մեր երկրին հարստութիւնը, հանքերը, բոյսերն և կերպանները...

Անշուշտ ներկայ յօդուածը՝ զոր կը թարգմանենք Ա. Հէյտի՝ աշխարհահռչակ գործէն, պիտի կարենայ աւելի ընդարձակ կերպով գոհացնել նիւթովս հետաքրքրուողներուն փափաքը՝ մեր Տրապիզոն քաղաքին առևտրական պատմութեամբ:

Տրապիզոնի Մագումը:

Երբ փոքր Ասիան յաջորդաբար թուրքերու ասպատակութեանց կ'ենթարկուէր, այն երևոյթը որ տեղի ունեցաւ հարաւ արևելեան (այսինքն Կիլիկիոյ) կողմը, կրկնուեցաւ նաև հիւսիս - արևելեան կողմերը. հոս ալ շնորհիւ լեռներու զօտի մը որ կը պաշտպանէր յաղթական զէնքերու ասպատակութեանց դէմ՝ փոքր պետութիւն մը, քրիստոնէայ իշխաններէ կառավարուած, սա ընդհանուրին հանդիպած դժբաղդութեանն ազատած էր: Այս երկրիքը՝ ծագմամբ յունական կայսրութեան պարզ գաւառ (թեմա) մէջ. իր կառավարիչները՝ քաղաքացիական ղեկավար տիտղոսով փառաւորուած, ինչ ինչ շրջաններուն՝

1. Histoire du Commerce du Levant au Moyen Age, par W. Heyd. Leipzig 1886, երկու հատորներէ (Ա. 540, Բ. 800 էջ) բաղկացած, միակ գիրքը որ ա-

րևելեան վաճառականական պատմութեան վրայ ամենա հմտութեամբ և այնքան խորիմաց ընկնութեամբ գրուած ըլլալ:

կատարեալ անկախութիւն մը վայելած էին: Այն տարին իսկ՝ երբ փռանկները գրաւեցին կոստանդնուպոլիսը, նա առանձին կայսրութիւն մը դարձաւ, Տրապիզոնի կայսրութիւնը, և այս նոր ձևին տակ՝ իր գոյութիւնը տեղեց մինչև ժեղաբաւ Առաջին իշխանը որ այս զահին վրայ բազմեցաւ (ապրիլ 1204) եղաւ Ալեքսիոս Ա, Անդրոնիկէի փոքր որդին. ուրեմն իր հիմնած աբբա-յական գերիշխանութեան ճիւղ մ'էր այն հոռիաններու ընտանեաց՝ որ յոյն կայսրութեան տուած էր նշանաւոր արքաները: Ալեքսիոսի զազականներէն մին Թամար, վրաստանի թագուհին՝ իրեն ապաւէն և բանակ տուած էր¹: Ամենէն առաջ գրաւեց փոքր Ասիոյ հիւսիսարևոյզը ընդարձակ երկիր մը, բայց իր կայսրութիւնը՝ կենսքն սկսելուն իսկ՝ վերածուեցաւ գրաւելու ծովեզրին վրայ հազիւ այն միջոցը որ պարսկականած է արևմտակողմը Թերմոստոնէ և արևելակողմը փաստէ: Թաթարներու արշաւանքը եկաւ բարբաղ-դաբար (1244) ազատելու այս փոքր կտորը, որ միշտ սպառնացած էր իկոնինոսի սուլթանու-թեան ջախջախիչ գերիշխանութենէն: Զետ սուլթանին բանակին պարտութեան մատուցելու, որով անոր գործութիւնը այլ ևս տկարացաւ, Թաթարներն իրենց իշխանութիւնն հաստատեցին Եփրատէն ևսզին. գալով Տրապիզոնի կայսրութեան, գտնացան տուրք մը ստանալ որ ժամանակ մը վերջ վճարուեցաւ, որով գինքը հանդարտ թուոցին. փոքր Ասիոյ մէջ ատենց երևումը՝ անուղղակի կերպով օգնեց Տրապիզոն քաղաքին բարեշնչողութեան և իր կարեւորութեան աւելնալուն, որովհետև նա մինչև այն ժամանակի բլուռնուած վաճառական ուղղութիւնը փոխեց, և Տրապիզոնը՝ Արևելքէն Արևմուտք առուտորի մեծ հոսանքէն նախապէս գործածուած ճամբուն վրայ ըլլալով², հարկաւորաբար գլխաւոր օթեաններէն մին պիտի ըլլար:

Տրապիզոն վաճառաւառի նաւահանգիստ:

Տրապիզոն միշտ իբր վաճառաւառ հրապարակ՝ մեծ դեր մը խաղացած է: Մինչև որ Բիզանդական կայսրութեան սահմանագլխի քաղաք մ'է-ղաւ, Կոյսներն և Արաբներն իրարու ժամադրաւոր ըրին զայն՝ իրենց ապարանքները փոխանակելու համար. ինչ որ մեզ կ'ապացուցանեն Մատտիոի, Խաղալիի և Իթն - Հաուրալի ըսածները³: Միւս կողմանէ՝ ծովով կը վաճառաւառէր կովկասի և Ռուսիոյ հետ: Իկոնինոսի սուլթանութեան, Սիւրիոյ և Միշնգիւնքի շատ մը մահմետական վաճառականներ իրարու ժամադրաւոր կու տային ի Սեբաստիա, ուր կարաւաններ կը կազմակերպէին և հոնկէ Տրապիզոնէն անցնելով՝ Պոնտոսի արևելեան և հիւսիսային ծովեզրները կը հասնէին: Բայց իր վաճառիկ յաջողութիւնն բոլորովին նոր ոյժ մը ստացաւ՝ Հուլաղու-Խանի

Պաղատաը կործանելէն վերջ, այն առեն երբ Դավրէժ՝ Ասիոյ վաճառիկ և քաղաքական կեդրոն դարձաւ: Փանի որ Պաղատաւ կահուցուն էր, Արեւելքի բերքերը դէպի Միշնգիւրական կը թափէին. իր անկումէն վերջ՝ հոսանքը դէպի վեր ելաւ, որովհետեւ՝ Դավրէժէն մեկնելով, այն կարաւանները որ դէպի ծով կը տանէին դէպի Արևմուտք զրկուած իրեղէնները, աւելի քիչ ճամբայ ունէին ընելիք Պոնտոսն հասնելու քան թէ Միշնգիւրականը: Նետաբար՝ առուտորի մէջ մեծ յեղաշրջողութիւն մը. մինչդեռ ժամանակին կեդրոնական Ասիայէն հասնող վաճառքներու մեծամասնու-թիւնը կը դիմէր դէպի Միշնգիւրական, ասկէ վերջ բաւականաչափ մաս մը սակայն հետեւեցաւ Դավրէժէն Պոնտոս գացող ճամբուն և գնաց թափել Սև Եզովու եղբերը, և աւելի ճիշդ ի Տրապիզոն, ընդի քաղաքացիները՝ բնութեամբ քիչ գործունեայ, նախաձեռնար համարելով փոքրիկ արուեստը քան թէ ընդարձակ ձեռնարկներու տաղանքալները, շատ երկրորդական մաս մը կ'առնէին մեծ վաճառականութեան գործին մէջ, բայց կատարեալ կերպով կ'ընթանէին այն օգուտները որ առաջ կու զային իրենց՝ օտարներու միշտ աւելցող ազդեցութենէն և հանդիքով կը տեսնէին որ օրէ օր կ'աճէին երկրին բերքերուն արտա-ման դիւրութիւնները: Եւ ստուգիւ, կայսրու-թեան երկիրը մէկէ աւելի աւարկաներ ունէր օտարներուն նուիրելիք: Մայրաքաղաքը կը պատրաստէր վուչի հիւսուողները և բամբակի ու մետաքսի բազմազոյն կերպաներ. կայսրութիւնը իբրև գոտիով չըլլապատող լեռները կը բովանդա-կէին արծաթի⁴ և երկաթի հանքեր և առաջնա-տեսակ արքը⁵:

Արդէն ըսինք որ Տրապիզոնի բնակիչները՝ մեծ վաճառականութիւնը օտարներուն ձեռքը կը ձգէին: Արևմտեաններն ասկէ օգուտեցան: Կեդրոնական Ասիոյ իրենց առջև բաց ըլլալով՝ արևմտեան պետութեանց և մոնղոլ խաներու մէջ փոխանկուած բազմաթիւ դեսպանութեանց շնորհիւ, եւրոպացի վաճառականներու մեծ մաս մը շարժեցաւ՝ իրենց գործունէութեան առջև բացուած նոր սպարէզէն օգուտելու: Տրապիզոն գոտուներէն մին էր՝ հոն մտնելու համար: Ասկէ՝ մէկ մասը կը հասնէր Դավրէժ կամ կը փորձէին դէմ աւելի հեռու՝ Ասիոյ սրտին մէջ երթալ. ուրիշներ հոն կը կենային և կը գնէին կարաւաններու մէջնոցաւ երկրին ներքեղէն եկած վաճառքները: Կը գնէին՝ ինչպէս Ալասի մէջ՝ Հնդկաստանի համեմները, Պարսկաստանի կեղտ-րանները, Զինաստանի մետաքսեղէնները: Զարմանալի է որ՝ այս երկրին մէջ մեր հանդիպած առաջին վաճառականները՝ երկու Մայրախիթացիներն, երկուք ալ ունենալով յանձնարարութեան նամակներ կարլուս Անտոնէ (ստորագրելով իբր Բրովէնսայի կոմս) Տրապիզոնի կայսրին համար. այս նամակներէն մին կրնար յանձնուիլ նաև

1. Պատմ. Վրաստանի. - Brosset. Ժամ. Ա. Կալթ.

2. Journal Asiatique. T. XIV. էջ 462.

3. Բարբրէ մէջ, ըսա Marco Polo.

4. Կերասունի կողմերը.

Թաթարներու խանին, ասիկա 7 դեկտ. 1266 թուականն ունի: Միւսը 13 յունուար 1267: Ժամանակ անցնելով՝ արդեօք Քրօվէնսացիք քուլեցան այս յուկայէն իտալացիներուն գալով, թէ իրենց նաւերը շարունակեցին յաճախել հոն, բայց առանց իրենց անցման հետեւող ձգելու... չեմ գիտեր. ես բան մը չի կրցայ գտնել: Ընդհանրապէս՝ ինչ որ գիտենք Արեւմտացիներու մասին որ Տրապիզոնը բնական ըլլան, կը վերադառնան իտալական երեք քաղաքացի՝ ձենովայի, Վենետիկոյ և Ֆիլիքսեցի անհատներու:

Ձենովացի գաղթականութիւնը:

Գիտենք որ ԺԳ. դարու վերջին տասը տարիներուն՝ ձենովացիները բաւական թիւ մը բնակութեամբ հաստատուած էին ի Պարսկաստան, և երբեմն անցողակի կերպով կ'երևնային Արեւմտացի մէջ՝ խաներու անուամբ պատգամաւորութիւններ կատարելու համար: Հետաքրքրաշարժ է փնտնել այն ճամբան որմէ կ'երթային և կը վերադառնային: Ընթերցողը նախ պէտք է ընդունի բնականապէս որ Այասէն կ'անցնէին, (քանի որ Միջերկրականի գլխաւոր նաւահանգիստն էր): Կրնայ սխալ իսկ ըլլալ, որովհետեւ դեռ աւելի համառօտ ճամբայ մը կար, և զոր կը գործածէին հաւանօրէն՝ Չայս մեզ ցոյց կու տայ վերջերս գտնուած վաւերաթուղթ մը, Կալֆրիտ տը Լանժէի (Galfried de Langele) ճամբորդութեան ծախքերու հաշիւը՝ երբ ինքն իբրեւ ղեկավար ղրդուեցաւ ի Պարսկաստան՝ Անգղիայ թագաւոր Եդուարդ Ա.է (1291-1293)¹: Լանժէի առաջին գործը ձենովա երթալն եղաւ. հաւանօրէն հոս էր որ կրնար տեղեկանալ կարևոր խորհուրդներուն՝ ընտրելիք ճամբուն մասին և գտնել ընկերներ որ արդէն այս ճամբորդութիւնն ըրած ըլլային: Հանգիպեցաւ իր փնտռածին. Պուսքարէլլոյ տէ կիզօֆի մէկը, որ Արդուն խանի քով ծառայած էր (1274-1291) և այս արջային անունով եկած էր այցելելու Հոռմի, Բարիզի և Լոնտրայի արքունիքները, և իր մեկնելէն առաջ՝ իր ծննդավայր քաղաքին մէջ քիչ մ'ատեն պիտի մնար. իր հետ պիտի տանէր Բէրչիվալլէ եղբայրը և Գորրատոյ թոռը: Լանժէի պատգամաւորութիւնը՝ Պուսքարէլլոյին պատասխանն էր. անգղիացի ասպետին համար՝ ասիկա բոլորովին անակնկալ բազմ մ'էր՝ կարենալու անոր հետ միասին ճամբորդել: Երթի և դարձի ճամբորդութիւնը Տրապիզոնին կատարուեցաւ: Այս ճամբորդները՝ հոս շատ մը պաշարներ առին ճամբուն համար. ուրիշ բաներէ գուրս՝ ձենովացի Պենէտէդօ անուամբ վաճառականն էր ձի մը գնեցին և իրենց բեռներէն մաս մը Նիքոյա Տոլիայի տունը ձգեցին: Այս մանրամասնութիւնները՝ ապացոյցներ են ձենովացի գաղթականու-

թեան մը գոյութեան Տրապիզոնի մէջ. մեր ճանաչածներէն ամենահիններն են: Այս Տրապիզոնի Տրապիզոնի մէջ ձենովացուց հրապարտման էր, ինչպէս կ'ենթադրէ Մ. Տէգոտէօնի, խնդիր մ'է զոր անորոշ պիտի թողուրք. բայց ոչինչ մեզ կը թոյլատրէ մերժելու ձենովական հրապարտարանի մը գոյութիւնը այդ շրջանին՝ այն քաղաքին մէջ: Ստուգելու հոգ տեսնուող իտալացիները ձենովացիներն են. իբրեւ վկայ ունինք Բիւզանդական պատմիչ Գեորգիոս Պաքիմենէսի մէկ պարբերութիւնը. 1306ի մէկ պատահարի մը մասին իստած ժամանակ՝ կը նկատէ որ ձենովացիներն հոն հաստատուած էին անցած շրջանէ մ'ի վեր (էջ ἀρχαίου)²: Ուրիշ դէպք մը որ միւսնոյն հետևանքին կ'առաջնորդէ գմեղ՝ այն է որ, Տրապիզոնի կայսրներուն և Վենետիկի միջև կնքուած պայմաններուն մէջ ձենովացիներուն առանձնաշնորհումներն շատ անգամ առնուած են իբրեւ տիպ՝ Վենետիկցիներուն տրուելիք շնորհքներուն համար: Մասնաւոր թաղի մը թայլութիւնը՝ ըստ ձենովացուց՝ 1300ի ժամանակները տեղի կ'ունենայ, և ստուգելու 1345ին ձենովայի և Վենետիկ տօժերուն միջև տեղի ունեցած նամակագրութեան մը մէջ, նկատմամբ հողի մը որուն վրայ Վենետիկցիները ինչ ինչ գործեր կը կատարէին, իբրեւ թէ հողն իրենց պատկանէր, կը տեսնեք որ ձենովայի տօժը ետ կը խնդրէ իր երկրի կը բոլորքին համար ոսկեգիր կոնդակի մը վրայ կը յենու, որ 50 տարի առաջ հրատարակուած էր յոյն և լատին լեզուներով, և որով Ալէքսիս Բ. Տրապիզոնի կայսրը (1297-1331), այս հողը ձենովացուց կը նուիրէր. տօժը կ'աւելցնէ թէ այս շնորհքն ընելով իր հայրենակիցներուն, Ալէքսիս իր նախորդաց օրինակին պիտի հետևի, որոնց ձենովացիք պարտական են ուրիշ թոյլտուութիւններ: Այս պարբերութիւնը բնական ընդարձակ հետաքննար մը կը քննարկէ մեր առջև ԺԳ. դարու առաջին տարիներուն շուրջ և մեզ ցաւի կու տայ կարգ մը հին կոնդակներու կորստեան մասին՝ որոնք արուած էին Տրապիզոնի կայսրերէն ի նպատակ ձենովացուց: Ալէքսիս Բ. կոնդակներէն երկուքը միևնոյն վերջն ունեցած են. առաջինը՝ թոյլտուութեան այն կոնդակն է, որուն վրայ կը հիմնուէր ձենովայի տօժը՝ Վենետիկ տօժին հետ ունեցած խնդրոյն մէջ. ինչ որ գիտենք այն է թէ՛ անիկա արդիւնքն էր Պետրոս Ալիլլոյի յանձնուած դեսպանութեան մը. երկրորդը՝ ուրիշ կոնդակ մ'է՛ ուրիշ դեսպանէ մը բերուած, որ է Օպէրդօ Քաղաքանէ տէլլա Վօլչալ:

Ուլիլլոյի իր հայրենակիցներուն համար գիշուած և իրապէս անոնցմէ ալ գրաւուած հոգաւոր գնահղուած էր Արիժներու զոհակն (Leontocastron) քով, կոչուած նաև Դոհակ կամ Գուռե Մէյտանի: Այս Մէյտան անունը կը

1. I conti dell'ambasciata al chan di Persia nel 1292, pubb. da Corn. Desimoni, *Atti della Soc. Lig.* XIII,

2. Bachym. *ուս.* Bonn. II. 448.

3. Այս տեղը՝ Տրապիզոնի արտաքիններէն մէկն էր:

տրուէր և այսօր իսկ կը տրուի երկար ուղղանկար ձևով տեղու մը՝ զետեղուած Տրապիզոնի նաւահանգստին տիրող դաշտագետնի մը վրայ: Արեւմտեան զոհակը՝ այս տեղւոյն կից՝ յառաջ խաղացում մը կը կազմէր դէպի ծով, և Տափ-նոս կոչուած քարափին վրայ կ'իջնէր: Այս տեղերուն ջով դեռ կը տեսնուին հսկայ ինու-թիւններ՝ որ շենոկացաց կը յատկացուին:

Նաւահանգստին մօտ իջալուռ և բարձրու-թեւէն քաղաքին վրայ իշխելուն պատճառաւ, այս հողամասը շատ մը առաւելութիւններ կ'ըն-ծայէր և շուտով պիտի տեսնէք թէ շենոկացիք որքան կարեւորութիւն կու տային ասոր: Սա-կայն ասիկա իրենց արգելք չեղաւ, զայն ըն-դունելէն քանի մը տարի վերջ, նոր պահանջ-ներ ունենալու: Շատ ծաղրական կը նկատուին որ այնքան փոքր իշխան մը զիրենց ստիպէր ի-րենց վաճառքները տեղւոյն մագաղակտնելուն քննութեան ենթարկելու, քանի որ Բիւզանդիոյ մէջ մեծ կայսրութեան մը պէտք՝ իրենց խոս-տացած էր ազատութիւն ու և է տուրքերէ: Դեռ պահութիւն մը զրկեցին՝ իրենց վաճառականու-թեան համար թեթեւութիւն մը ստանալու հա-մար: Ալէքսիս Բ կայսրը ոչ մէկ կերպով տրա-մադիր չէր այդպիսի գիշտութեան: Այն ատեն շենոկացիք ձևացուցին իրեն թէ կ'ուզէին խզել ամէն յարաբերութիւն Տրապիզոնի հետ: ամէն անոնք որ գործատուններն ունէին քաղաքին մէջ՝ մեծ աղմուկով իրենց պատրաստութիւնները տե-սան՝ իրենց շարժուն ինչքերը փոխադրելու հա-մար՝ նաւաճատոյցին մէջ խարսխուած նաւե-րուն վրայ: Ալէքսիս այս ցոյցէն բնաւ չվախ-ցաւ: շատ լաւ կ'ըմբռնէր որ այս առուուարին խզումը աւելի ֆնասակար պիտի ըլլար շենո-կացաց վաճառականութեան քան թէ էր զան-ծին: Նետաւաքար յայտարարեց թէ կը ձգէր յօ-ծարակամ որ անոնք մեկնէին, բայց այն ատեն միայն երբ վճարէին նախնապէս ներամուծած վաճառքներուն վրայի տուրքերը: շենոկացիք բացայտաւ մերժումով մը պատասխանեցին և իրենց ծրարներու գէպի նաւերը փոխադրումը դէռ աւելի շտապեցին: կայսրը զօրքեր զրկեց զանոնք հնազանդութեան ստիպելու համար: հե-տեանքը խառնաշփոթում մ'եղաւ, ուր արիւնը վազեց և շենոկացիք շատ գէշ կերպով վարուե-ցան միւսներէն: փորձեցին չփոթել իրեն պատճա-ռով՝ արուարձանը հրդեհելով: գոթաղաքար քա-րափին դեռ հաւաքուած վաճառքները կրակ առին: դեռ շատ ապրանք կար նաւահանգստին մէջ սպասող տասներկու նաւերուն վրայ բեռը-նելու համար: Մարդերու և ապրանքներու կո-րուստը՝ ստիպեց զիրենց հաշտութիւն խնդրելու և ենթարկուի մագաթ իրաւունքներուն՝ մինչև նոր հրաման: Այս դէպքերը կը պատահէին 1306ին: Բայց գոտարութիւնները շուշացան վերածնելու: Միքայէլ Բանարէղոս, իր Տրապի-զոնի քրոնիկին մէջ կը տեղեկացնէ որ 1311ին

լատինները գինուեցան, և թէ կռուի սաստկու-թեան միջոցին՝ հրդեհեցին ծովային նաւարանը: Իմ կարծիքս համեմատա՝ այս լատինները ձե-նոկացիներն ըլլալու են: Ստուգիւ՝ յաջորդ տա-րիները նշանաւոր հանդիսացան՝ շենոկայի և Տրապիզոնի միջև եղած գինեալ կողմնորոն հա-մար: Իր նաւարանի հրդեհին վրէժը խնդրելու համար, Ալէքսիս Բ 1313ին Սիւնոպի տըր՝ Ղազի 2էէպիին հետ կէս առ կէս՝ դէպի Խրմա արշա-վար մը կազմակերպեց: Կաթայի և այս երկրին ուրիշ տեղերու շենոկացիներն շատ գէշ կերպով վարուեցան այս առթիւ: Տրապիզոնէն մեկնած նաւեր՝ Սև ծովու մէջի շենոկական նաւերը կ'որոսային: իրենց կողմէն՝ Նոկտաւիանոս Տա-րիա, Ալէլիսիոյ կերկր, ՄԵԿՈՒՆԻ ԼԷՔՔարի և շենոկացի ուրիշ նաւաստիներ՝ ընկղմեցին Տրա-պիզոնի նաւերէն մաս մը: Յետ երկու կողմէ ի-րարու բաական ֆնաս հասցնելու, որոշեցին խաղաղութիւն ընել: 1314ի և 1316ի դաշնագիր-ներուն մէջ կը տեսնանք որ երկու կողմերն ալ ֆնասներու հատուցում կը պահանջեն: Կ'երեկ թէ լծանաութեանց միջոցին՝ կայսրը շենոկա-ցիներէն առած ըլլալ լեռնկատարոնի թաղը: Խա-ղաղութեան ժամանակ, առոր փոխարէն տուաւ անոնց՝ ծովային նաւարանի ատենօք գրաւած տեղը և իրենց թոյլատրեց պարսպել զայն պա-րիսպներով աշտարակներով և փոսերով: Սակայն տարբեր պայմաններ դրաւ անոնց: արգելք յոյն հպատակներուն այդ թաղին մէջ բնակելու: այս արգելքը հաւասարաբար զործադրելի էր բոլոր օտարներուն, բացի հիւպատոսին արտօնու-թեամբ թաղին մէջ արդէն կառուցուած եկե-ղեցիները՝ որոնք մէջ՝ յոյն կղերին տրամադրու-թեան տակ պիտի մնային, պաշտամունքի կա-տարման համար, և այս թաղին մօտաւոր քարափը շենոկացաց տրամադրութեան տակ պիտի մնար: արգելք յոյն կամ օտար նաւերուն մօտենալու հոն՝ հասնելու կամ մեկնելու ժամանակ: Երկու պայմանագիրները կը ճանչնային, ինչպէս որ ար-դէն ըստիք, ճենոկական հիւպատոսարանի մը գոյութիւնը Տրապիզոնի մէջ: երկրին դատա-րաններու իրաւասութեան նկատմամբ, հիւպա-տոսին իրաւասութիւնը սահմանուած է ըստ սո-վորութեան:

Շենոկացաց ի Տրապիզոն հաստատուելուն հա-մեմատաբար հին թուականը, իրենց՝ կայսրերու հանդէպ բռնած վարմունքին խտտութիւնը, բնա-կան հեռեանքներն էին այն զօրաւոր դիրքին զոր այս ցեղն ունէր ի կալաթա և գերագործութեան՝ որ իրեն կ'ապահովեցնէին Սև ծովու շրջերուն մէջ զաղթականութիւն մը այնքան ծաղկեալ և նաւային կայարան մը այնքան զօրաւոր որքան էր Կաթայիից: Այս երկու զօրաւոր յենակէտ-ներով՝ շենոկա կրնար հիմնել և պահպանել ու-րիշ զաղթականութիւններ Սև ծովու եզերքնե-րուն երկրային վրայ: Ինքն այնքան ապահով էր իրեն խնդիրքին լուսելուն, որ եթէ ուժի գիւժէր իր խնդիրքը կատարել տալու համար, պէտք չունէր Խալկիդէն զօրք կանչելու: ասի-կա շատ հեռու էր: Ինքը միշտ պատրաստ ուժեղ ունէր ի կալաթա և ի Կաթֆա: Նոյն զաղա-

Ք) փարսերու ուրիշ հետեանցով մը՝ Տրապիզոնի ճենոփական գաղթականութիւնը ուղղակի կերպով միացած էր շենոփայի կեդրոնական հեղինակութեան հետ. հոն կը գտնուէր մատակարարութիւն մը՝ Խրիստոս Պաշտօնաւեհեան (Oficiu Gazariae) կոչուած, որուն պաշտօնն էր տնօրինել գաղթային գործառնութիւնները Պոսփորի և Պոնտոսի մէջ և դէպի այս երկու վայրերուն նաւային ծառայութիւնը։ Այս պաշտօնաստեանակը յատուկ հրահանգներ կը խմբագրէր՝ նաւերու հրամանատարներուն որ Տրապիզոն պիտի հանդիպէին և սակէ դէպի Դամբլէօ գացող կարաւաններուն համար. կու տար նաև մասնաւոր պատուէրներ Տրապիզոնի հիւպատոսներուն։ Այս վերջին տեղոյն կարևորութեան հետեանքով, զայն բռնող անձին անուանակոչումը՝ կեդրոնական հեղինակութեան վերապահուած էր,

փոխանակ կաֆֆայի հիւպատոսին թողլու. առիկա՝ իբրև գլուխ Պոնտոսի գաղթականութիւնը ներքին ամենէն կարևորին, իրաւունք ունէր առնուանել՝ ստորին կարգի գաղթային պաշտօնեաներ, նոյն իսկ իր քնակավայրէն դուրս։ Թէ՛ օգնելու համար հիւպատոսներուն՝ անոնց մատակարարական և դատական պաշտօններուն մէջ, և թէ՛ ձևացնելու համար՝ ռամկավարական սկզբունքներու համեմատ՝ հակակշիռ մը անոնց գօրութեան. իրենց միացած էին երկու խորհուրդներ, փոքր և մեծ խորհուրդ մը, բաղկացած՝ մին վեց և միւսը քսանէնչորս անդամներէ, ամենքն ալ նոյն գաղթականութեան մէջէն ընտրուած։

Յաջորդով պիտի խօսինք Վիենտիկեցոյ գաղթականութիւններուն վրայ։

Թրգմ. Մ. Հ. Մ. Շէնիպեան

Մ Ե Ր Ն Ո Ր Ղ Ե Ի Ո Ն Դ Ե Ա Ն Ք

ՊԵՌՈՒ ԲԱՅ Է, 1500 տարի կ'ընէ, Աւարարի գաշտին տեսարանը։ Դա գերագոյն ողբերգութիւնն է՝ որու հանդիսատեսն է համօրէն աշխարհը։ Մամիկոնեան դիւցազնին և Ղևոնդ Վանանդացիին մեծ դէմքերը կը լուսաւորեն այդ հակադարձութիւնը։ Գլխաւոր դերակատարները, անոնք որ կրօնքի ու հայրենիքի գաղափարը կը մարմնացնեն, անփոփոխ մնացած են, անընկճելի, վճռական, պատկառանք ու հիացում ազդող, Դահլիճները կատարելագործուած են, «անդնդային վիշապը» վազը փոխուելու աստիճանի չափ վայրենացած։ Ամենէն սև դէմքերը հանդիսանալով են, կարելի է ըսել՝ թէ անոնք անարժան են տեսարանին վեհութեանը։ Անոնք որ կեղծեցին իրականութեանց պատրանքին առջև յուզուիլ, փառք համարեցան խուլ և համր ձևանալ իրական, ոգին ցնցող ոճիւրներուն առջև, անզգայութիւնը տանելով մինչև անգթութեան սահմանները։

Միջին դարերէն մինչև այսօր մշտական կռիւներու մէջ տարուբերուող մեր

ազգը մեծ թուով տուաւ իր մարտիրոսները, առանց յեղափոխութեան մատնելու իր պատմական ճակատագիրը։ Ան կանգնած իր անպաշտպան հողին վրայ, միայնակ մղեց արիւնահեղ պայքարներ պաշտպանելով ըրիտօնէական քաղաքակրթութեան սկզբունքները խաւարի վրայ նստող հուժկու և խստասիրտ հրոսակներուն դէմ։ Դժբախտութեան սև դարեր չկրցան զրկել հայ ցեղն իր դիմադրական ուժէն, զոր կը գտնէր ան իր մտքին ու հոգւոյն մէջէն, երբ ամէն անգամ վտանգուած կը տեսնէր կրօնքի ու հայրենիքի դատը։ Աւարարի տեսարանը և այդ սև դարերը կը նսեմանան կարծես Միջագետքի անապատներուն քով։ Խորագովի ապառաժ անապատը, ուր գացին իրենց փառաւոր կեանքը կնքելու Ս. Ղևոնդեանը, բուրաստանի մը կը վերածուի մեծ անապատին առջև, ուր ոչ թէ կ'իյնան «հազար երեսուն և վեց վկաներ», աւրը ձեռքերնուն մէջ, ոչ թէ խումբ մը քահանաներ, արգարութեան ատենանի մ'առջև քաշուած, այլ զէնքը ձեռքերնէն խլուած բիրաւոր Հայեր,